# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՀՕ-269-Ն ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-987-17.12.2024-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հունիսի 12-ի ՀՕ-269-Ն օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է համակարգային փոփոխություններ կատարել խաղային ոլորտի հարկման իրավական կարգավորումներում և սահմանել, որ խաղատների, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները ներկայումս վճարվող հարկերին և տուրքերին զուգահեռ վճարում են նաև շրջանառության հարկ՝ նշյալ գործունեության տեսակներից ստացվող եկամուտների 10 տոկոսի չափով: Համաձայն նախագծերի փաթեթով ներկայացված հիմնավորման՝ վերջին 5 տարվա ընթացքում կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք միտված են եղել խաղային ոլորտի սահմանափակմանը ու հարկային բեռի ավելացմանը, սակայն նախագծերի հեղինակի կողմից կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ձեռնարկված քայլերը բավարար չեն, և անհրաժեշտ է հարկային բեռը կրկին բարձրացնել:

Վերոգրյալի կապակցությամբ հայտնում ենք.

Նախագծերով ներկայացվող առաջարկության հիմքում ընկած է այն եզրահանգումը, որ ոլորտում առկա հարկային բեռը և նախորդ տարիների ընթացքում հարկային բեռի աճը համարժեք չեն խաղադրույքների աճի տեմպերին: Սակայն

խնդրահարույց է նախագծերով ներկայացված այն մոտեցումը, որի համաձայն՝ խաղատների, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, վիճակախաղերի, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպիչների համար շրջանառության հարկը փոխարինում է միայն ԱԱՀ-ին, ինչը նշանակում է, որ ոլորտի հարկումն իրականացվելու է միաժամանակ շահութահարկով և շրջանառության հարկով: Այս մոտեցումն ուղիղ հակասության մեջ է շրջանառության հարկի համակարգի ընդհանուր տրամաբանության հետ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շրջանառության հարկը շահութահարկին և ԱԱՀ-ին փոխարինող հարկատեսակ է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է նախագծերի փաթեթի հիմնավորմամբ մատնանշված նպատակներին հասնելու համար խնդիրը լուծել պետական տուրքի ավելացման մեխանիզմով՝ վարչարարությունն ավելի թիրախային դարձնելու համար: